

ՓՈԽԸՄԲՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

*Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և
Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի միջև
համագործակցության մասին*

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս նախարար Հովհաննես Մանուկյանի, և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (այսուհետ՝ Պալատ), ի դեմս Պալատի նախագահ Արա Զոհրաբյանի, (այսուհետ՝ Կողմեր),

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված օրինականության, անձի իրավունքների և ազատությունների, պատիվն ու արժանապատվությունը հարգելու սկզբունքները,

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները հոչակված են բարձրագույն արժեքներ, ինչպես նաև մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան ապահովելու բարձր առաքելությունը,

Կարևորելով Հայաստանի Հանրապետության իրավական և, մասնավորապես, արդարադատության համակարգի զարգացմանն ուղղված համագործակցությունը,

ձեռք բերեցին պայմանավորվածություն հետևյալի վերաբերյալ.

Հոդված 1

Նպատակը

Սույն հուշագրի նպատակը փոխադարձ համագործակցության շրջանակի ապահովումն է և Կողմերի միջև գործակցության խթանումը ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում:

Հոդված 2

Համագործակցության հիմնական ուղղություններն ու եղանակները

2.1 Կողմերը համաձայնվում են համագործակցել հետևյալ ուղղություններով և եղանակներով՝

2.1.1 փաստաբանական գործունեության և մարդու իրավունքների բնագավառին առնչվող՝ Նախարարության կողմից մշակվող, ինչպես նաև իրավական փորձաքննության և պետական փորձագիտական եզրակացություն ստանալու համար Նախարարություն ուղարկվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ Պալատի կարծիքի ստացում.

2.1.2 Նախարարության համակարգում փաստաբանական դպրոցի ունկնդիրների կամ շրջանավարտների համապատասխան պրակտիկայի կազմակերպում (ոլորտների և ժամկետների փոխհամաձայնությամբ).

2.1.3 Կողմերի պայմանավորվածությամբ, առանձին հարցերի շուրջ Նախարարության և Պալատի միասնական կարծիքի ձևավորման նպատակով՝ Նախարարության կոլեգիայի և Պալատի խորհրդի համատեղ նիստերի անցկացում.

2.1.4 փաստաբանական գործունեությանն առնչվող հարցերի վերաբերյալ վերլուծական, վիճակագրական և այլ նյութերի կազմում և ներկայացում, ինչպես նաև օրենսդրական և այլ բնույթի առաջարկությունների ներկայացում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին.

2.1.5 Նախարարության գործունեության ոլորտում փաստաբանների կողմից մասնագիտական պարտականությունների կատարման հետ կապված խնդիրներ առաջանալու դեպքում դրանց քննարկում և լուծման ուղղությամբ համապատասխան միջոցների ձեռնարկում.

2.1.6 Կողմերի իրավասություններին առնչվող հարցերով համաժողովներին, սեմինարներին և ուսուցողական ու ճանաչողական բնույթի այլ միջոցառումների համատեղ կազմակերպում, նմանատիպ միջոցառումների միակողմանի կազմակերպման վերաբերյալ տեղեկությունների փոխանցում մյուս կողմին, դրանցում փոխադարձ մասնակցության ապահովում.

2.1.7 Կողմերի գործունեության ոլորտներին առնչվող խնդրահարույց և այլ հարցերի կապակցությամբ համատեղ մասնագիտական քննարկումների և խորհրդակցությունների կազմակերպում.

2.1.8 Նախարարության իրավաբանական ինստիտուտում և Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոցում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մասնագիտական դասընթացների կազմակերպում.

2.1.9 Կողմերի տիրապետման ներքո գտնվող մասնագիտական գրականությունից ազատ օգտվելու հնարավորության ընձեռում.

2.1.10. Սույն հուշագրի նպատակից բխող այլ ուղղություններ:

Հոդված 3

Պատասխանատու ներկայացուցիչներ

3.1 Սույն հուշագրով նախատեսված համագործակցության իրականացումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը և Պալատի նախագահը նշանակում են մեկական պատասխանատու ներկայացուցիչ:

3.1.1 Պատասխանատու ներկայացուցչի լիազորությունները սեփական նախաձեռնությամբ կամ նրան նշանակած Կողմի որոշմամբ կարող են վաղաժամկետ դադարեցվել:

3.2 Պատասխանատու ներկայացուցիչը՝

3.2.1 կազմակերպում է կողմերի միջև համագործակցությունը սույն հուշագրի 2-րդ հոդվածում նշված ուղղություններով.

3.2.2 առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին կամ Պալատի նախագահին (ըստ ենթակայության)՝ սույն հուշագրով նախատեսված դրույթների խախտումները կամ դրանց իրացմանը խոչընդոտող արգելքները վերացնելու վերաբերյալ.

3.2.3 համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին և Պալատի նախագահին է ներկայացնում առաջարկություն աշխատանքային խումբ կազմավորելու մասին՝ իրավական ակտերի նախագծեր մշակելու, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ քննարկում կազմակերպելու կամ այլ հարցեր քննարկելու նպատակով.

3.2.4 հետաձգում չհանդուրժող հարցերի առաջացման դեպքում (օրենքի պահանջների կոպիտ խախտում, իրավունքների սահմանափակում, օրենքով նախատեսված պարտականությունների կատարմանը խոչընդոտում և այլն) Կողմի պատասխանատու անձն անհապաղ իր ղեկավարին է ներկայացնում տեղեկատվություն՝ համապատասխան առաջարկություններով.

3.2.5 իրականացնում է այլ գործողություններ, որոնք պայմանավորված են սույն հուշագրի 2-րդ հոդվածում նշված համագործակցությունն ապահովելու անհրաժեշտությամբ:

Հոդված 4

Հուշագրի գործողությունը, դադարեցումը, փոփոխումը

4.1 Կողմերը հաստատում են, որ սույն հուշագրում տեղ գտած դրույթներն արտացոլում են փոխադարձ համագործակցությանը վերաբերող նվազագույն ոլորտները և չեն սահմանափակում կողմերի համագործակցությունը համատեղ հետաքրքրություն ներկայացնող ցանկացած բնագավառում:

4.1.1 Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանիորեն դադարեցնել սույն հուշագրի գործողությունը՝ այդ մասին առնվազն 1 (մեկ) ամիս առաջ գրավոր տեղեկացնելով մյուս Կողմին: Սույն հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել նաև Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

4.1.2 Սույն հուշագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով:

4.1.3 Այդ արձանագրություններն ուժի մեջ կմտնեն Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների ստորագրման պահից և կկազմեն սույն հուշագրի անբաժանելի մասը:

Հոդված 5

Եզրափակիչ դրույթներ

5.1 Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

5.2 Սույն հուշագիրը ստորագրված է Երևան քաղաքում, 2015 թվականի մայիսի քսանմեկին, երկու օրինակից, որոնցից յուրաքանչյուրը համարվում է բնօրինակ և ունի հավասարազոր իրավաբանական ուժ:

Ի հավաստումն վերոգրյալի՝ Կողմերի պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչները ստորագրեցին սույն Հուշագիրը:

ՀՀ Արդարադատության նախարարության
կողմից

ՀՀ փաստաբանների պալատի
կողմից

Հովհաննես Մանուկյան
Արդարադատության նախարար

Արա Զոհրաբյան
Պալատի նախագահ

21 մայիսի 2015թ.

21 մայիսի 2015թ.